

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալարա-Սերայի Լիսեին դեմ

ԴԵ. ԵԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6 ԿԵ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՀԵՐՃԱՅԻ

ԱԼԻՔՍԱՆ ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ անունով
ծանօթ վաճառատան անունը այս անգամ
ՀԵՐՃԱՅԻի փոխում ըլլալով, կը ծանույ-
ութի թուրք արդոյ՝ յաճախողաց որ եթէ կը
փափաքին հարկերին իննստուն ՇԱՀՈՎ եւ

առանց վնասի գոհարեղէններ գնել կ'ու-
ռու ԱՊԱՌԻԿ, եւ ծախել առանց վն-
սի տէր է զիմեն ըստ առաջնոյն, Ոսկի
Շուկան, թիւ 13 վաճառատունը:

ՅԱՆԹԷԶԻ ՀՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ պատ-
ճութեան մասնագէտ Պ. ՊԵՏԼԷՐԵԱՆ թիւ
ԹԷՔԷՏ, ՊԵՋԵՐԻ մաղաղային դէմ, Բ. Ն.
պատիւ ունի ծանուցանել թէ իր վնաս-
տան մէջ կը ծախուին վերջին նորածնութե-
համաձայն ընտիր հովանոցներ, մասնա-
պէս կանանց համար, որոնցմէ ամէնէն քիչ
կաճաչակներն իսկ զոհ պիտի մնան: Եւ
նարարութեամբ կը պատրաստէ թիւով ֆ-
թէզի հովանոցներ, յարեւմտան եւրոպայի
ներուն: Պատրաստ կը գտնուին նաեւ հո-
սանեկան օժիտի յատուկ գեղեցիկ հովան-
ներ: Կը հրաւիրենք հայ ընտանիքներ
գամ մը այցելել այս վաճառատունը որ
տեսակին մէջ առաջին է: Չափաւոր գին
1-

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հաւուցեալ վնասք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հաւուցեալ վնասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւեսաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆՔ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՆԵԼԻՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան արեւելքի որ եւ է ընկերութեան
պայմանները: Շահարաժիններու տարուէ տարի անոյձական վճարում, որով ինքիս
ապահովագրողը ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահարաժիններու բարդման (accumulation des
bénéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահով-
գրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆՔԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային գիւմաթ
Կործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՍ

51^{րդ} ՏԱՐԻ

— I ՅՈՒՆԻՍ 1902 —

ԹԻԻ 22

Ի ՈՎ Ա Ն Դ Ս Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աղագեմական Բառարան (խմբագրական) **Տ. Ա.:** — Ծարրուան կեանքէն. Հիւանդանոցին մեջ. ՍԳԷԼԼԱ. — Ժողովուրդին բնարը (Անախա սիրերգներ). **Ս. ԳՍԻԹԵԱՆ:** — Ընտանեկան տառ. ներ. Վճարորդ. **ԲՕԼ. ՊԵՒԲԺԻ:** — Ուսուցիչներու կեանքի տպանկագրութիւնը: — Ճարտնական Բանաստեղծութիւններ. Սեր / — Գարունի երգ. — Յուշատետր:

ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Չգիտի կրնայ բառիլ թէ մենք ալ չու-
նեցանք մեր «անմահներ»ը կամ կաճառական-
ները, իրենց ապագայ Բառգիրքովը եւ
իրենց secrétaire perpétuelով: Սա պղտիկ
ապրերու թեամբ Յրանսական Ակադեմիէն,
որ մերկններուն թիւը՝ փոխանակ քառասունի՝
կը հաւատարի Առաքեալներու թիւին, որոնք
պիտի դոճանան «աշխատող»ի համեաւ տիա-
ղտով:

Հայ լեզուի զարգացման տեսակէտով՝ ան-
մասնապի թուական մը պիտի ըլլայ ուրեմն
1902 մայիս 25ի չարաթ օրը, երբ առաջին
անգամ հրապարակ ելաւ «Յօլսէփ Իզմիրեանց
Գրական Յանձնաժողով»ին անապասելի որո-
շումը:

Անձնականութիւններ վերաւորած ըլլալու
մեղադրանքին չենթարկուելու համար, —
մեղադրանք մը որ մեր բարի սովորութիւն-
ներուն կարգէն է, հրապարակային քննադա-
տութիւն մը եղած առեւն, — հա՞րկ է ըսել
թէ Մասնախումբին կազմութիւնը վեր կը
մնայ որ եւ է քննադատութենէ, անոր ան-
դամներուն մեծագոյն մասը կատարելապէս
ձեռնհաս ըլլալով այն աշխատութեան զօր
պատակալ կերպով կատարելու կը հրաւիր-
ուին. ինչպէս, օրինակի համար, Յօլսէփ
էֆ. Եւստֆեան՝ ղրտական եւ արուեստա-
բանական մթերքի համար, Տօքթ. Թորգոմ-

եան՝ բժշկական եւ յարակից բառերու համար
Բարթոլէֆ. Թէլեան՝ վարչական եւ դիւա-
նական ճիւղերու համար, Բիւզանդ էֆ. Քէչ-
եան՝ հրապարագրական ոճերու համար. Նոյն-
պէս Դուրեան Սրբազան, Հ. Մէնէվիչեան,
Պէրպէրեան էֆ. եւ ուրիշներ՝ իրենց մաս-
նագլխութեան համաձայն:

Այս վերապահումէն ետքը, որ անձերը կը
զատէ գործէն, երկրորդին վրայ կ'արժէ ծան-
րանալ քիչ մը, ո՛չ միայն իրրեւ նորութիւն
մը որուն գործադրութիւնը ու աւելանալու
թիւնը երկրացելի են, այլ մասնաւանդ իր
նորութիւն մը որ կը հակառակի բարեյիշատակ
Յօլսէփ Իզմիրեանցի Կտակին արամադրու-
թիւններուն:

Որչափ որ դիտենք, Ղզլարցի այդ պատ-
ուական Հայը 1884 ապրիլ 3ին իր պատրաս-
տած օրինաւոր Կտակով 10,000 բուպլի դրած
է Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին տրամադ-
րութեան տակ, պայմանով որ անոր տարեկան
տոկոսը, 600 բուպլի, ամէն տարի՝ իբր մրցա-
նակ՝ պարգեւ տրուի ազգ. դրականութեան
եւ հնախօսութեան վերաբերող լաւագոյն եր-
կասիրութեանց հեղինակներուն: Կտակարարը
նոյնքան գումար մըն ալ թողուցած է՝ տո-
կոսը յատկացուելու համար գաւառային աղ-
ջըկանց դպրոցի մը մասնակարարութեան, եւ
այդ նպատակը, 1887էն ի վեր, յատկացուած

է Մուշի աղջկանց վարժարանին որ բարերարին անունը կը կրէ :

Այս երկու 600ական թուղթներէն ո՞րն է զոր Բառարանի մը պատրաստութեան ու փպագրութեան յատկացնելու կը ձեռնարկէ Իգմիրեանց Գրական Յանձնաժողովը, — տեսնոցմէ դուրս գումար մը չունենալով իր տրամադրութեան ներքեւ : Մուշի աղջկանց վարժարանին մատակարարութիւնը չի կրնար թողուլ բնականաբար, եւ գրական լաւագոյն երկասիրութեանց նոյնիսակ քաղաքական մրցանակին ալ երկամեայ մրցանակի վերածուիլը պատճառ մը չէ որ անոր յատկացուած գումարը դադրի իր որոշ նպատակին գործածուելէ :

Ասոնք հարցուններ են որոնք ներկայացան մասնաւորապէս բանասէրներու եւ գրասէրներու մօքին որոնք կը հետաքրքրուին այս մրցանակով, եւ ընդհանրապէս ամէն Հայու մօքին որուն մէջ յիշատակ մը ունի Յովսէփ Իգմիրեանցի անունը :

Նորայր Բեւառագոյնի հոյակապ Բառգիրք մը չինեց՝ առանց այս կամ այն հանրային մարմինի գիւմում ընելու, առանց զպրօքի կամ գրականութեան յատկացուած գումար մը խնդրել ու խորել մօքէն անցընելու, բաժանորդագրութիւն բացաւ, գրասէր անձերու գիւմում ըրաւ, ու գործը զլուի հանեց : Այսպէս նաեւ Մեսրոպ Նուպարեան :

Երբ Յարմատեայ Բառգիրքներու երկու հեղինակները յաջողեցան անհատական ձեռնեղենութեան գեղեցիկ օրինակ մը տալ, ինչո՞ւ այդ ինքնալստաճութիւնը չունենայ հաւաքական մարմին մը, որուն կը նախագահէ Ս. Պատրիարքը եւ որ լաւագոյն տարրերէ բաղկացած ըլլալու առաւելութիւնը ունի : Իգմիրեանց Գրական Յանձնաժողովը այնքան խղճամիտ գիտենք իր ձեռքը դառնում Կտակին գործադրութեանը մասին, որ մինչեւ իսկ իր քարտուղարին (չի չփոխել Բառարանի Մասնախումբի «միայուն քարտուղար»ին հետ որուն պաշտօնն ալ կը սիրենք հաւատալ թէ պատուակալ եղած ըլլայ՝ Մասնախումբի անդամներուն պաշտօնին պէս) ամսաթուղթը կեդր. Միտակէն կը մճարուի, իրենք քարտուղար Պատրիարքարանի : Այս

պայմաններուն մէջ գործող եւ իրեն վստահուած աւանդին այսքան հոգածու մարմին մը ինչպէ՞ս կը մտածէ յանկարծ, թէ փոխանակաբարուէ տարի 60ական ոսկի մրցանակ թող խելու գրական երկերու, լաւագոյն է այդ գումարը յատկացնել Բառգիրքի մը պատրաստութեան : Այս անսակ որոշում մը, եթէ երեւք տրուած է վերջնականապէս, Իգմիրեանց Կտակին տրամադրութեանց չքացում է, եւ հայ բանասէրը՝ որ տարինկալ կը աքնի, կ'աշխատի, իր դուռնին անկնք կամ իր մենաստանին առանձնութեանը մէջ այդ կտակին պայմաններուն համապատասխանող երկասիրութեան մը պատրաստութեան, մրցանակը կամ անկէ բաժնի մը ունենալու իտէալով, իր ակնկալութիւնը խորտակուած պիտի տեսնէ մէկէնիմէկ :

Մանգուսեի Էփեսուր, որ յաջորդապէս երկու յօդուած հրատարակեց՝ Յանձնաժողովին ծանօթ որոշումը քննադատող, ասոնցմէ երկրորդին մէջ կը յիշէր Պալեան Յովսէփ պէյին առնել ժամանակին զբաղեցնելու համախմբումը, հայերէն լեզուի Բառարան մը յօրինման համար : Թովմաս Թէրլեան, մէկը այդ աշխատութեանց մասնակցող ասոնցմէ զանդուոր զբաղեցնելուն, — որ հրակրօն է անպամակցելու արդի Մասնախումբին ալ, — պիտի կրնայ վկայել թէ Պալեան Յովսէփ պէյ ճշմարիտ մեկնեալ մը կը հանդիսանար իր գրական ճաշակներուն գոհացման ու բարձրացման լեզուական ճշգրտութիւններուն կատարմանը համար : Իւր ծախքովը կը հրատարակէր ժողովրդային տարեգոյցներ, ուր նորակերտ բառերը ներմուծուած էին, գրական երկեր որոնք իրեն նմոյշ պիտի ծառայէին լեզուական միօրինակութեան, եւ այլն : Բայց ասոնց ո՞չ մէկուն համար Ազգին կապուած գրամի մը դպչելու գաղափարը չէր ունեցած :

Եթէ «Արդի Հայերէն Լեզուի Բառարան» մը պատրաստութեան համար տարեկան ոսկին կը բաւէ արդարեւ, Իգմիրեանց Գրական Յանձնաժողովին յարգելի անդամները իրենց իրենց մէջ եւ գրասէր հարուստներու կողմէ ընելով, շատ դիւրաւ կրնան փոխանակաբար այդքան պզտիկ գումար մը որ մեծ է, ասկայն, աղքատ բայց հմուտ բանասէրներ

վարժապետին ու վարդապետին համար օրոհն քայլերու թեանը ու վարձատրութեանը միջին մտածած էր Յովսէփ Իգմիրեանը՝ երբ կտակեց իր տառը հաղար ըսպելին :

S. U.

“**Վ. ԵՐԱՌԱՐՁԸ,**”

Ֆրանսերէն Սերվիք օրաթերթը իր անց-
եալ չորեքշաբթիի թիւէն սկսելով, յաջորդա-
բար չորս թիւերու մէջ իբրեւ Թերթօն հրա-
տարակց Գ. Զօհրապի Վերադարձը նո-
րաթէկիին Ֆրանսերէն թարգմանութիւնը, Պ.
Փան Մինասեանի կողմէ կատարուած, Այդ
նորաթէկը, հա՞րկ է յիշեցնել, Մասիսի մէջ
հրատարակուած էր եւ հեղինակին գեղեցկա-
զգին զրուածքներէն մէկն է՝ զրական ոճի,
նկարագիւղ պատկերացումներու եւ զգացմանց
սրտայայտութեան տեսակէտով:

Վերադարձին ընծայուած այս պատիւը յիշելու առթիւ, հաճութեամբ կը ծանուցանենք նաեւ վերադարձը Զօհրապ էֆէնտիի՝ Իզմիրէն, ուր դուղէէն-փաստաբանը զայցած էր երկու շաբաթ առաջ, իր գործերուն պատճառաւ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՔՆԱՐԸ

Նորասան առ հաճելի երեւոյթ մը կրնայ
 նկատուիլ հրաւերը որ Կաթինէն կուգայ : Պ.
 Վ. Պոլտաւմեան, քանի մը ժողովրդական սի-
 ռիլդի նմուշներ զրկելով՝ առիթ կուտայ : Նա-
 ախուս հաճելի գաղափարի մը վրայ դարձնել
 լատաթը-գրադէտներու ուշադրութիւնը : Եւ-
 րաստիան գրադէտութիւնը, Պոլտաւանը, վաղ-
 ւանը, դաւառականը, եւայլն, իրենց առ-
 զանցումը ըրին վերջին տարիներս մեր մա-
 ժուլին մէջ՝ անոնց վրայ թելուգէմ դրուե-
 լով, թէեւ առանց որոշ եզրակացութեան մը
 յանդիւր : Ու հիմա կարգը եկած է,
 կարծես, ուշք դարձնելու դպրութեան ան-
 գիր ձևին վրայ, եւ Մասիս, առանց այո
 անգամ հարցարանի ձև մը տալու, յօժարութիւն
 կը յայտնէ քիչ մըն ալ ժողովրդային՝ բանաստ-

տեղծութեան վրայ ընթերցողներուն ճաշակը արթնցնելու, գրողներուն ալ զատաստաններն ու կարծիքները շտեղծելու՝ այդ անդիր բանահաւաքութեանց արժէքին վրայ, գրական, լատինատեղծական, լեզուի եւ իմաստի ու արուեստի տեսակէտներով :

Այս կարգի սրբապետ թիւններ կամ փոփո-

խումներ, կամաւ ըլլան թէ ակամայ, դաւա-
ռական լեզուին հարադատութիւնը կը խան-
դարեն, ու չինձու երեւոյթ մը կուսան եր-
գերուն :

Պ. Վ. Գուլումճեան նորութիւն մը չէ որ
կը բերէ, բայց կրկնութիւն մը կ'ընէ որ,
չգիտեմ ինչո՞ւ, շատ հաճելի կուգայ այն կարգ
մը նորեկուկ ու բռնազրօտիկ ստանաւորնե-
րուն մէջ որոնք նոր գրականութիւն անունով
կը գայրնուին. ասոնց մէջէն չտեսայ հատ մը
որ Անտունիի մը մէկ տունը արժէր՝ պատ-
կերի, գոյնի եւ բնականութեան տեսակէտ-
ներէն :

Թիւ 1 Անտունին ամբողջ սիրերգի մը լակ
առաջին մասն է. իր ամբողջութեանը մէջ
եթէ ներկայացուած ըլլար, սիրովէս մը տի-
տի երեսան դարձ կրկն վերածուած՝ գերակա-
տար ունենալով մատուցուի հարս մը, իր կաս-
կածոտ կեսուրը (ծանօթ Չատուկներէն մէկը)
եւ հետեւ երկրէ գարձող երկատարդ ամու-
սինը որ գետափին վրայ կը հանդիպի իր նո-
րատի կնոջ (պտուաւ կեսուրէն դատուած) :

Այս սիրովէս-բանահիւստութիւնը իր ամ-
բողջութեամբ կը գտնէք սղրացեալ Յ. Ճա-
նիկեանի երկին մէջ (Հնոթիւնք Ակնայ, էջ
431—433) :

Թերի է, նոյնպէս, թիւ 4ը, որմէ կը
պակոխ երկու տուն :

Մարդը սիրու սէր կ'անես,
Կու դառնաս «ախպար» կու կանչես :
Աս հալդ ալ աղբար չի'լիւր
Սիրու սէր իմ, իս կու խաբես :

Վեցերորդ տունին ամբողջութիւնն է հե-
տեւալը :

Կարմիր կապաւոր աղուոր,
Վա՛ր իջի, գօտեկ մի կապիմ :
Կապիմ ալ ճը քու կապիմ,
Ուր հովը քանի ու բերէ :
Հայ՝ սա՛ր ու բեր, սա՛ր ու բեր,
Գեթ սա՛ր, աղուոր բեր :

— Ես ո՛ւշ գիշուն քանդուն իմ,
Ո՛ւշ աղուոր կուսան՝ սա՛ր ու բեր :
Մեկ աղուորին քաւր գե,
Ես կու քամ, աղուոր մ'առ ու բեր :

Աղուորն արեգակ նման,
Սա՛ր ու ձոր հաւսար կու ծագէ :
Ան գեհն ի գեղուր նման,
Ախոսին պատերն է կողած :

(Շարունակութիւնն է Ծրդ տունը որով
հարագս ձեռն է հեհեւալը) :

Աղուոր մի գիշուն ծոցը՝
Կու քապլի, քունը չի քանի :
Ան գեհն ալ խայտալ կ'անէ,
Իր սիրուն քունը չի քանի :
Գիշուն սէրն արեւ չունի,
Աղուորին գիշերն է ցորեկ :
Գեթ գիշերով երբայ,
Աղուորին մագիկ չի խոսի :

Եթեմերորդ տունին առաջին տողերն
հարադատ կ'երեւան, քանի մը դրական բա-
ռերով. Անոր պէս երբ մը կայ, բայց Ա-
տունի չէ, այլ հարսանեկան քաշ-հարկն
ըսուած խաղը : Իսկ նոյն տունին վերջին տո-
ղը վերջաբանն է համակ ոսկեգրուած
պատկերատ տեսարանի մը զոր կ'արժէ
արտատպել :

Ես աս գիշեր դուրս ելայ,
Մուր գիշեր՝ չի կար լուսնայ :
Իմ քա՛րն ալ շոտս եկաւ,
Չեմք կար ոսկուն մաշարս :
Թեւեւ բռնեց տուն քա՛րս,
Դուռ դուռ, ախիկն ի վրան :
Չգեց խոշ թիւիջ տօշակ :
Սերեւեր բարձերն ի վրան :
Մագեր ոսկունքն սեղան,
Հաւ խորված՝ կախան ի վրան :
Խմե՛ ուր քսիմ անուռ,
Ես մեկզա բռնիմ քեզի նուռ :
Սերը սիրողին վալիկ,
Աս գիշին անուռ խոտիկն :
Ինչեխ անտունի մ'քսիմ,
Ուր քնայ խեհեհն ի ափիդ,
Խեհեհն ի ափիդ քնայ,
Ոսկի քել պիտեդ երեսիդ :

(*) Քաշ-հարկն կը նշանակէ ծանր եղանակով
երգ, որ կ'երգուի հարսնիքներու մէջ. Այնքան երգ
չի գործածէր. անոր տեղ ունի խաղ, հարկն, քաշիկ
չիւս, անտունի, շաց եւայն զորս կը գործածէ ըստ
ըզգային :

Սէր կայ մարդն ի քուն կ'անէ ,
Սէր կայ մարդն արքուն կու պանէ :
Սէր կայ մարդն ի ժամ քանի ,
Անալոթք ի քուն կու բերէ :

Ութերորդ տունը կէս առ կէս փոխ առնուած է երկու տարբեր կառոններէ . առաջինը աղաւթն էստին գովեստն ու նկարագիրն է . իսկ երկրորդը անյոյս սիրոյ մը զոհին եղբերորդութիւնն է , ուր «հողին տակէն , սիրով միացող սրտին բոցը ծիրանի գոյնով կը պոթկայ» : Ասկից աւելի ուժեղ ու կորովի բացատրութիւն , աւելի նկարագրեղ պատկեր կրկնէ՝ է երեւակայել , չեմ գիտեր :

Իններորդ համարն ալ , նմանապէս , երկու անանձին ու տարբեր հատուածներէ առնուած կտորներ կը կազմեն , որոնց իմաստը դիւրաւ չ'ամբողջացներ : Առաջին մասին ինը տողերը նորասի հարսի մը մեղաբանութիւնն է , պաշտօնի շնորհիւ ջրիկին ու իր նշանածին վրայ որուն կարօտով իր սէրն աղուսուր կ'ըլլայ , ու սիրան հալումաշ : (Տե՛ս Հնուքիւնք , էջ 441—442) :

Իսկ նոյն իններորդ համարին վերջին վեց տողերը բոլորն ու անյարիր կտորուանք են , տարբեր տեղերէ առնուած տողերով : Ասոնց ամբողջը դարձեալ մեներգ մըն է ուր Հարսը իր խօսի շունկկային .

Աս ո՛վ՝ աս երգիւիդ եկե՛ր ,
Աս քու հողը կու կոխէ :
Թը մարդ ես քը՝ վա՛ր եկու ,
Թը տուան — ծաղիկ գնալու :
—Ու՛ր մարդ իմ , ի վար գալու ,
Ու՛ր տուան ծաղիկ գնալու :
Պիւղպիւղ իմ ու ժուռ գալու ,
Շա՛ս երամ ունիմ գնալու :

Ո՛ր աղբիւր ուր ջուր խրսէ
Ան ջրբին ակնեկ պիսեի :
Փածմար , ան ջրեհն խրսէ
Ես ալ իմ կարօսն առնեի :
Երբաի ո՛ր քաղաքն իջնէ ,
Ան քաղաքն խանձի պիսեի :
Ուր քառ ու խանը իջնէ ,
Իմ աղուր օտան քանեի :
Թեւիկս ալ քըլիմ ձրգիմ
Մանգրիկ հետք խորքիմ :

Սքանչելի չէ՞ք դոներ . աղբիւրին ալը ,
Ծորակը ըլլալ կը ցանկայ , որպէս զի սիրահանը ջուր խմած ատեն համարոյր փոխանակէ՝
կրկնապէս ծառաի շրթունքներով . . . :

Այս պակասները այն դիտումով փոյթ կ'ունենամ ամբողջացնելու , որ կարելի ըլլայ նիւթին վրայ որոշ գաղափար մը կազմել եւ Մասիսի գրագէտ ու բանասէր աշխատակիցները , (որոնք անշուշտ անպատասխան չպիտի թողան իրենց ուղղուած հրաւերը) ի վիճակի ըլլան իրենց քննութիւններն ամբողջական հատուածներու վրայ կատարել եւ հասուն դատաստան մ'ընել՝ լեզուի , գաղափարի , ոճի եւ ուրիշ հանգամանքներուն վրայ այս հասունտիր ժողովրդական բանահիւսութեանց :

Ճշմարտութեան հակառակ չէ՞ հաստատել որ՝ ուրիշ ո՛չ մէկ գաւառի ժողովրդական բանաստեղծութեան փչրանքներուն մէջ , ուրիշ ո՛չ մէկ գաւառի սիրերգներուն մէջ պիտի հանդիպիք այնքան օժտուած կտորներու որքան Ակնցիներու այս երգերուն , պարբերաբուն , ջայլերուն (*) եւ ուրիշ անգիր բանաստեղծութեանց մէջ : Համակ հրայրք ու զգացում , ճոխ պատկերներ , նկարագրեղ ոճեր եւ քնքուշ բացատրութիւններ , տեղ տեղ ալ ճշմարտապէս բանաստեղծական գիւտեր — անաքանի մը բառով այս Անգնիներուն ու անոնց նման կտորներուն նկարագիրն ու հանգամանքը . եւ այս ամէնքը ձեռք բերելու համար պէտք է որ զանոնք երկնող միաքերն ալ նոյն աստիճանով նրբացած զարգացած ըլլան , ինչպէս էին իրօք Ակնայ հին սերունդները : Ըսե՛նք նաեւ թէ լեզուի կողմէ ալ չնորհէ ու հրապոյրէ զուրկ չեն այս սիրերգները , շատ սահուն ու բնական լեզու մը ունին , թէպէտ ոչ-հայ բառեր ու գրաբարի ինչ ինչ ձեւեր հոն քաղաքացիութեան դիրք ստացած կ'երեւին :

Հիմա , խօսքը կուտանք կարողներուն որպէս զի աննախապաշար ողիով մը գրական վերլուծութիւնն ընեն այդ ափսիներուն :

26 Մայիս , 1902

ՍՄԲՍ ԴԱԻԹԱՆ

(*) Ջայլ — ողբ , լաց , մեղներու վրայ երգուած ողբերգութիւններ որոնց մէկ բանի նմոյշը — անտիպ — պիտի տանք առաջիկային :

ՇԱԲԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՁ

— Պա՛հ, ուշ ես մնացեր .

Պիտի ըոճք, չեմ գիտեր, երբ Հիւանդանոցի հինգշաբթի օրուան հանդէսէն սկսիմ, հինգշաբթիի հանդէսէն, որ, գիտէք, Ազգ. Հիւանդանոցի հաստատումին 70 հարող տարեդարձին եւ Համբարձումի տօնին կրկնակ նշանակութիւնները ունէր այս տարի :

Ե՛հ, ի՛նչ ընել այս անտեղիտալի յապաղումին, երբ զուգադիպութիւնը ուղած էր որ Եփաի-Գուլէի բացատմաներուն մէջ Համբարձումի տօնը կատարուած ատեն, ասդին Մաւիսը չէր կրնար սպասել տպուելու, — հազիւ երկու տողով մը միայն յիշատակելով մեծ տօնին կատարումը Հիւանդանոցին մէջ, — ուրբաթ օր, Ժամանակին, հասնելու համար ընթերցողներու, որոնք, օ՛հ, որչափ խոտապահանջ ու ճշգրտահ կ'ուզեն դառնալ, երբ ինչո՞րք իրենց հրամցուածին վրայ է, եւ ո՛չ երբեք . . . թերթի դրամ տալու :

Մաւիսին օրաթերթ չըլլալը աչքի առջեւ ունենալով-ուրեմն, — որ կարենայի յապաղումիս համար դատապարտուիլ չարաչար, — կուզեմ մասնակից ընել ընթերցողներս, ինծիղոտ խրախճանքներուն այն սիրուն օրուան, որ էր ամպրտ արեւծագով հինգշաբթին :

Համբարձումի հինգշաբթին, հրճուեցնող բան մը ունի, ժողովուրդին համար, որ գիտէ վայելել ամէն ինչ որ իր սիրտին ու իր սրբազան կրօնքին հետ կապ ունի, ինչպէս են քրիստոնէական բոլոր տօները :

Օրերով, կ'օրօրուի ան՝ երազովը գալիք օրուան վայելքին : Այսպէս, երբ խորապէս զգաք այն եռանդը, որ զինքը կը մղէ Համբարձումը տօնելու, կրնաք մակարեւել թէ ինչո՞ւ այնչափ լեցուն կըլլան այդ օրը Եփա-Գուլէ գացող կառախումբերը, բազմութիւնով մը, որ ջրհանկիրէն մինչեւ էն աղնուա-կանը ունի իր մէջը :

Հանդէս մը տօնելու այս զգացումը, անուշ բան է. պէտք է զգալ զայն, մանաւանդ ռամիկին զգացումով :

Օրուան միօրինակութենէն զերծ, քիչ մը բազմակողմանի ու բարդ կեանքին խառնուելու համար, հինգշաբթի առտու, ջերմանոց ուխտաւորի մը պէս, կանուխ ձամբայ կիր նամ ընկերով մը հետ, զէպի Եփ-Գուլէ Ազգային Հիւանդանոցի մատուռը, ուր Ս. Պատրիարքը կը պատարագէ : Աղուր երկից մը չեն խոստանար թափառիկ ձերմակ տալերը, որոնց ծիծերէն անձրեւ մը պիտի քամուի կըսես, վայրկեանէ վայրկեան, երբ ուտած աչքերու պէս, որոնք փղձկումի մը կը սպասեն :

Բայց անձրեւը ո եւ է վախ չի տար մեր ուխտին :

Մարդոց, կրներու, աղոց, ու մինչեւ անգամ իրենց մօրը գիրկը ելած մանկիկներու խուռնամբոխ բազմութիւն մը լեցուցած է մատուռին ներսը, դուրսը, քովերը, երբ կը հասնինք հօն : Ուք դնելու տեղ չիկայ, բազմութեան մէջէն անցնիլ լսելու համար Պատրիարքական քարոզը, որ սկսած էր Աղուէսի ճարպիկութիւնով մը, վերջապէս կը սողոթիկնք ձախ պահարանը, ուրկէ կուտայ կը լսենք Օրմանեան Սրբազանին խոստա-կուռ ու պերճախօս քարոզը, իր գոռ ձայնովը չեղտուած մանաւանդ, երբ ան գիտութեան զգացումը կը քարոզէ, Քրիստոսը քիչ նակ տալով, եւ ազգին օգնութիւնը կը խնդրէ իր մեծ հաստատութեանը համար : Հիւանդանոցին, ուր ամէն տեսակ հիւանդներ, անկարներ, յաւատներ, անհասկանալի նիւթական օգնութեանը կը կարօտին, ամէն ժամ :

Քարոզը այնչափ գեղեցկօրէն վեր կը հանկայդ զգացումը, որ « չի կրնար ըլլալ ալ », — ժողովրդական ձեւաբանութիւն մը գործածելով :

Քարոզին աւարտումէն ետքը, պարտէ կ'իջնենք, ուր այլազան տարազներով բազմութիւն մը կը վժայ : Հօն կը մտածուի ջանքը ի՞նչ չկրնար ընել, ի՞նչ էր Հիւանդանոցին պարտէզը, ի՞նչ է հիմա : Պատկերները այնչափ հակոտնեայ են իրարու, որ բազդատութեան անգամ չեն կրնար գրուիլ : Խոպան գետին մը չէ՞ր առաջ այդ պարտէզը ստեղծը, ուր թուրք ուսուկ կուգային ընդ-

հանրագէտ աս ու ան մարդիկ : Մինչդեռ հի-
մա լսան մը չպակսիր անոր՝ Հիւանդանոցի
պարագէզ մը համարուելու համար , իր հսկայ
հովանաւոր ծառերով , իր ծաղկալից անու-
նեով , իր գեղեցիկ շատրուանաւոր աւա-
զաններով , ուր Եփրատ-Գուլէի պայծառ եր-
կինքը կը ցոլանայ , աղուոր արեւին տակ :

Հոգեհանգիստը , զոր կը կատարէ Ս.
Պատրիարքը եկեղեցիէ ելքին , Կիւլպէնիեան-
ներսէ դամբարանին վրայ , ամէն մարդու
վրայ փափաք մը կը բերէ բարերար ըլլալու
հանրային յարկի մը , որ գոնէ գիտնայ ապե-
րախա չըլլալ , ինչպէս է Ազգին Տանը :

Հիւանդանոցի բոլոր յարկերն ալ , կը վա-
րկեն , խռան բազմութիւնէ մը չըջապա-
ռած , Ս. Պատրիարքին այցելութիւնը ,
որ Խաչահանգիստ կը կատարէ ամէն յարկի
մէջ , խաչահանգիստը կը բաշխէ ամէն կողմ , եւ
կը միտքարէ հիւանդները , խնդ կը բերէ
անոնց վրայ : Հիւանդանոց մը տոնուր է միշտ ,
կոթնեցուցիչ չէ՞ դիտել անկողինին գամուած
վախ մարմիններ , դեղնած , մեղրամոմի պէս ,
հալ ու մաշ , երերալու անկարող , ապաւինած
դեղբուր զօրութեան , որ զիրենք օտքի պի-
տի հանէ :

Հիւանդներուն մէջ , մահաւանդ մէկը
ամէնուն ուշադրութիւնը կը գրաւէ . իր շուրջը
կը խռնուին , հարցումներ կընեն իրեն : Վար-
դապետի երեսնյոթով մէկն է , Լաւուազիէեան
գանձով , ընդ , ճաղատ , խոշոր գանկ մը ,
յոնքերուն մէջանդ խոշոր ուռեցքով մը : Գան-
կարտնութիւնը այնչափ ճիշդ կ'երեւայ ինծի
ու այնչափ կը զբաղեցնէ զիս , որ , թուա-
բանի զլուխի մը կը նմանցնեմ այդ գանկը ,
միակ ակնարկով , եւ երբ կը հարցնեմ իր
շուրջը գանուողներուն թէ ո՞վ է ան , Գար-
նիէ Ներշապուհին անունը կուտան : Իրաւ
զիտէ իր վիճակը , պատմուածներէն աւելի :
Օ՛հ , ինչ ցաւ է ծերութիւնը , երբ հիւան-
դութիւնն ալ ունի ան իրեն ընկեր :

Հիւանդանոցի մը մէջ , յիմարանոցի բա-
մին միշտ ամէնէն ուշադրաւն է , ու կեան-
քի զանաւոր լեցուն զպրօքը , ռաթիկ միա-
քէն մինչեւ իմաստասէր հոգեբանին : Ասոր
համար չէ՞ որ , ազան անգամ , երբ հիւան-
դանոց մը գտնուի , տաանց զիտակցութեան ,

խենթերը տեսնանք կ'ըսէ , առաջին անգամ :
Այդ միաքով թշուառները , ուղեղի այդ վի-
ժանքները , ինչէ՞ր կը պատմեն , իրենց ան-
բարբառ ապշային կերպարանքով , երբ մարդ
գիտնայ վերելածն անոնց զգացումները , կար-
գալ անոնց հոգին : Ասոր համար է որ մաս-
նաւոր ուրախութիւնով մը կը համակուիմ ,
երբ Խաչահանգիստի պտոյտներու միջոցին կը-
սեն մեզի թէ , յիմարանոցն ալ պիտի մտնենք :
Գեանին երեսը նկուղ մըն է անոնց յարկը :
Շապկիներ հագած , բոպիկ , ոմանք կը պատին
սրահին երկայնքին , միօրինակ , դանդաղկոտ
քայլերով , միշտ բան մը մտածելու վրայ ,
ցնդած փլիխոփաներու պէս : Ուրիշներ , նըս-
տած են , ծողապատիկ , կորաքամակ , ու
կը նային իրենց շուրջիններուն երեսը , միօ-
րինակ սառած նայուածքով մը , որ բան
չհասկնալ կ'արտայայտէ : Տեսակ տեսակ են
ապուշանոցի այս ցաւազար բնակիչները—Սի-
րոյ արկածեալներ , ուղեղի ֆիզիքական վի-
ժումներ , մոլութիւններէ պարպուած գան-
կեր , որոնց համար կեանքը մեր տեսածին
պէս չէ : Անոնցմէ ամէն մէկը յանկերգ մը
ունի , ձեւերու , խօսքի , մտածումի յանկերգ
մը , ուրկէ դուրս բան չճանչնար , ուրկէ դուրս
կեանք չի կայ իրեն համար : Անոնցմէ մէկը ,
օրինակի համար , անկիւն մը , արեւին մէջ
կեցած , քարոզ կուտայ , բոլոր յուզումնալից
եռանդովը ճարտասան վարդապետի մը : Կը
քարոզէ , շատ բաներ կըսէ Աւետարանէն ,
Սաղմոսէն , Նարեկէն , եւ իր կողմէ յարմար-
ցուած , խենդ ու խելառ , իրար չբռնող խօս-
քեր , որոնց մէջ չէ՞ք գիտեր թէ ինչ խելօ՞ք
բաներ ալ կան երեսին : Ուրիշ մը , անկիւնը ,
պատին դարձած , օգին մէջ , թել կը մանէ ,
վայրկեանը մէջ մը մատը թուքոտելով , կար-
ժառը դարձնելու եւ թելը ոլրելու ձեւացումով :
Ի՞նչ կ'ընէ արդեօք , չէ՞րք ուղեր գիտնալ :
Անգին , յոյն կին մըն ալ , ագռաւի փետուրի
պէս սեւ մագերը ուսը թափած , ետ առաջ
երերալով , Աստուածամօր վրայ աղօթք կընէ ,
բարձրաձայն , մշտնջենապէս , միօրինակ : Երբ
իրարու կը հարցնենք թէ ինչ ըսել կուզէ ան ,
ուրիշ ապուշ մը , դուարձալի միամտութիւնով
մը .

— Ապուշ է ան , կըսէ մեզի :

Այդ միջոցորտը կը ճնշէ մարդուն վրայ . շատ կարելի չէ մնալ հոն : Մտածուածք կը ցնորհցնէ քեզ :

Դուրս կը նետուինք ապուշանոցի դուռնէն , դէպ ի պարտէզը , լայն շունչ մը առնելու , այդ միտքով ինկածներու քովէն հեռու :

Պարտէզի գեղեցիկ շրջագայութիւնը կը նշահատուի ճաշի հրաւերով , սովորական ընդարձակ սրահին մէջ : Պատրիարք Սրբազանը կը նախագահէ սեղանին , ու առաջին բաժակը կ'առաջարկէ Վեհ . Սուլթանին կենացը :

Բաժակաճառերը իրարու կը յաջորդեն , — եկեղեցականներէն ետքը աշխարհականներուն կողմէ , — որոնց մէջէն է'ն ինքնատիպը կ'ըլլայ Պէրպէրեան էֆէնտիինը , որ Հիւանդանոցին մէջ կին հիւանդապահներ մացնելու օգտակար գտաւարին ջատագովանքը կ'ընէ , այն աւուշ եւ յուզիչ շէշաերով , որ իր լեզուին յատուկ են : Կը մտածեմ թէ որքան ճիշդ է Մարդիկ եւ Իրի հեղինակին արծարծած խնդիրը . «Որքան կեանքի արկածեալներ կան , որոնք սիրայօժար պիտի ուզէին ինքզինքնին նուիրել գթութեան գործին , միտքարեւով , խնամելով հիւանդները , ատոր մէջ գտնելով իրենց սիրտիանք մը , մեծ վայելք մը» : Այդ հիւանդը , գեղ ալ չուզեր , երբ իր գլխուն վերեւ կը գտնէ կնոջ մը հովանին , անոր ձեռքերուն խնամքը , որ չցաւցներ , կը բուժէ , վարդ կը բուսցնէ դաշած տեղը : Հիւանդանոցը իր կատարելութեան ուրիշ մէկ փուլին մէջ մտած պիտի ըլլայ , երբ այս այնքան առողջ , այնքան բարեբաւ գաղափարը իրականութիւն դառնէ հոն :

Չեմ գիտեր թէ գթութեան քայրերու խօսքին ո'րքան մօտիկ պիտի գտնէք . . . դինին եւ գարեջուրը , որոնց շագիծը ալ տաքցած էր գլուխնիս աղուոր մը , պիտի ըսեմ , երբ ճաշարահէն կ'ուղղուէինք դուրսի պարտէզը , քիչ մըն ալ մանկու համար ժողովուրդի կեանքին մէջ , ուսումնասիրութեան , կեանքը դիտելու համար կրնամ ըսել , խնդուք չպատճառելու պոյմանով , Հոս առմիկը կեանքի իր մերկապարանոց պարզութեանը մէջ է որ ի յայտ կուգայ , բոլոր իր միամտուկ ձեւակերպութիւններովը եւ աւանդապահութիւններովը : Տունին մեծը իր աղաքը ժողոված է

բայաստան մը տանելու , ու անոնք , հիմա , ամէնքը , հոն , դեմինը , չոր հողին վրայ լիուռած , իրենց ամէնէն մեծ վայելքի ժամերը կը գլեն , ո'րը օդին գլուխը ո'րը սուրճի գաւաթը ձեռքին մէջ , ուրճ մը եռացնելու զբաղած , ամէնը , ամէնն ալ բանի մը վրայ : Տղաքը կը վազվզեն , կը խաղան , թռուցիկ կը թռցնեն . ծնողքներ , գլուխին տաքցած , թափթփուկ երգի կոտոր մը չրթունքնուն վրայ , կը կանչեն , մտադաշ ու հասուկ աղջնակներ . հովուերգու թիւններ կը փորձեն դրացի պարմանիկու հետ , ու այդպէս , մինչեւ օրը դիշեր ըլլայ :

Բայց շատ մեծ պէսպիսութիւն մը չընտելիր այս կեանքը : Օրինակի մը վրայ չարտած ձեւուածի միօրինակութիւնը ունի ան , մէկ ընտանիքէն միւսը : Նոյն սովորոյթը , ամաւ կան այդ օրուան մէջ , նոյն նիստուկաղը , նոյն բարքը : Բանի մը քայլ թափառումէ ետքը , ձանձրանալ կը սկսինք ա'լ , այդ քիչ մը տափակ կեանքէն , տափակ մէկ ծայրէն մինչեւ միւսը :

Կառք մը , ու դէպի Ս . Յակոբի Որբանոցը , ուր կերթայ նաեւ Ս . Պատրիարքը , նախագահելու համար զպրոցական հանդէսի մը :

Ուրբանոցի ծառադարձ պարտէզը շրջանափուռ է մանչ ու աղջիկ որբերու շարքով : Տախտակէ բարձրավանդակի մը վրայ կանաչնորդուի Պատրիարքը ուր կը նստի , շրջագայութեամբ հրաւիրեալներէն : Որբանոցի տարեկան տեղեկադիրը կը կարդացուի , ուրիշ կէ կը տեսնուի թէ որբանոցին մէջ ուսումնականին հետ մեծ կարեւորութիւն արուած է նաեւ արհեստական ճիւղին : Այս պարագան կ'ուրախացնէ ամէն անոնք որոնք հասնում են թէ , այդ որբերը խելէ աւելի բաղուկի ուժի' է որ պէտք պիտի ունենան , չուկայ նետուած առաջին օրէն , քանի որ զրամատուելի մը զրադիրները չէ' որ պիտի կրնան ըլլալ անոնք :

Ուսանող-արհեստաւորներէն մէկը , գրաւոր բանաթուղթեան մը մէջ , իր եւ իր բնակերակիցներուն կողմէ սրտադին գոհունակութիւնը կը յայտնէ իրենց արհեստաւոր պատրաստուած ըլլալուն համար , որով «մեծ

կողմէ վկայեալ ուսուցիչ կամ ուսուցչուհի, դաստիարակ կամ դաստիարակուհի լինելը պիտի հաստատէ, եւ այդ պայմանը ստուգելու համար ով որ յիշեալ դիւրութիւններով ապահովագրուիլ կը փափաքի, պարտաւոր պիտի ըլլայ իր առաջարկը նախապէս Ուսումն. Խորհրդոյ ներկայել, որպէս զի անոր վկայութեամբ եւ հաստատութեամբ յանձնուի Բարիքի Իւնիօն կենաց ապահովագրական ընկերութեան Կ. Պոլսոյ մէջ ունեցած Տնօրէնութեան : Այդ կերպով ուսուցիչք ալ վստահութիւն պիտի ստանան որ Ուսումն. Խորհրդոյ միջնորդութեամբ իրենց իրաւունքները եւ դիւրութիւնները օրինաւորապէս պիտի պաշտպանուին :

«Այդ ամէն կարգադրութիւնք, ինչպէս անգամ մը յիշեցինք, օրինաւոր պայմանագրութեան ձեւով Իւնիօն ապահովագրական ընկերութեան Տնօրէնութեան եւ Ուսումնական Խորհրդոյ միջեւ հաստատուած, եւ Ազգային Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովոյ կողմէ վաւերացուած են, եւ մեր կողմէն ալ ներկայեւս կը հաղորդուին ազգային կրթութեան աշխատող եւ երախտաւոր պաշտօնէից, յատուկ հրաւիրանաց եւ քաջալերութեան յորդորներով, որպէս զի հանրային կրթութեան նուիրեալ անձեր, որոնց միտքն է իրենց գրամագլուխը եւ սիրտն է իրենց զօրութիւնը, այդ մասին մէջ ալ ցուցնեն իրենց նախատես եւ հետատես խոնականութիւնը, եւ իրենց ապագային եւ իրենց սիրելիներուն ապագային անապահովութիւնը ապահովին այդ գեղեցիկ միջոցով, եւ ուրախ ըլլալով որ իրենք իրենց քրտանց եւ աշխատութեան խմաստուն խնայութեամբ եւ գեղեցիկ կազմակերպութեամբ կրնան հոգալ այդ կենսական նպէքը որ շատ աւելի յարգի եւ պատուաւոր եւ քաղցր եւ հաճոյական է, քան սղորմութեան եւ պարզ օգնութեան ձեւի ներքեւ ձեռք կարկառուելով ստացուած նըպաստը : Այդ վերջին ձեւն ալ ունի իր կարեւորութիւնը, այլ միայն երեւելի եւ աներեւոյթ կոչուած փորձանքի մը եւ կամ անակնկալ ձախողութեան մը պարագային պիտի պահուի, եւ սովորական ապահովութիւնը անձնական հոգացողութեան հետեւանքը պիտի ըլլայ :

«Թէպէտեւ ապահովագրութեան ձեւը միշտ քաջ էր ամէն անհատի առջեւ, այլ Իւնիօն ընծայած դիւրութիւնները յատուկ են եւս, առնձինն, ինչպէս յատուկ եւ մեծ են Իւնիօն ընկերութեան վարկն ու կարողութիւնը, եւ հրապարակի վրայ վաշխած վստահութիւնն ու ընդարձակութիւնը, որով այլեւս մեր կրթական պաշտօնեայք ազատ պիտի լինին այս կամ այն ընկերութեան մօտ այս կամ այն կերպով ապահովագրուելու վստահութիւն, դիտարկելով թէ Իւնիօնի մօտ ապահովագրուելով պիտի ունենան անպայման վստահութեան եւ զօրութեան եւ անդադրած դիւրութեան եւ յարմարութեան քաղձայնայ պարագաները : »

Ինչպէս բացորոշ կերպով կերեւայ Պատրիարքական Շրջաբերականէն, Իւնիօն ընկերութիւնը, — Թուրքիոյ մէջ հաստատուած եւրոպական ապահովագրական ընկերութեանց ամէնէն աւելի վստահելիներէն ու պատուաւորներէն մէկը, — լուսագոյն եւ նպատաւորագոյն պայմանները առաջարկած է ուսկից պիտի կրնան օգտուիլ այն ամէն հայ ուսուցիչները եւ ուսուցչուհիները որոնք ունեն ապահովագրել իրենց կեանքը եւ խնայութեան մը ընել ապագային համար : Ասով հանդերձ, պարտաւորիչ բան մը չիկայ իրենց համար, եւ լոկ կամաւոր դործ մըն է ըլլեն լիքը, Հետաքրքրուողը պիտի կրնայ Ուսումն. Խորհուրդին եւ կամ հոյն իսկ Իւնիօնի գրասենեակները դիմելով, լիովին տեղեկանալ պայմաններուն եւ սակացոյցերուն, թէ եւս անք հրատարակուեցան ալ :

Ինչպէս երկու պաշտօնակիցներ յիշեցուցին արդէն, Օսմ. Հանրային Պարտուց Վարչութիւնն ալ, ասկէ առաջ, ուղելով ապահովագրել իր պաշտօնեաներուն կեանքը, կոչում ըրաւ զանազան ընկերութեանց, որոնց մէջէն ամէնէն նպատաւոր պայմանները ներկայացուց Իւնիօնը եւ իրեն յանձնուեցաւ այդ մեծ վարչութեան ստուարութիւ պաշտօնեան ապահովագրութիւնը :

Ուրախալի է որ Պատրիարքարան եւ Ուսումն. Խորհուրդ այսչափ հաստատուն հիմերու վրայ դրին ուսուցիչներու կեանքն

պահովագրութեան գործը, որ սերտ կերպով
կապուած է անոնց օգնութեան Մնտուկին
հաստատմանը հետ, եւ ուսկից՝ նիւթական
տնտեսութեամբ՝ օգուտ միայն կրնայ սպասուիլ՝
այդ դատարարական համար: Փոխադարձաբար,
չորհաւորութեան արժանի են Իւնիօնի Արե-
ւելքի Ընդհ. Տնօրէնը՝ Սիմոն Էֆ. Գալսէրլեան,
որայնքան պատուաբեր կերպով կը ներկայացնէ
ազանովագրական այդ մեծ ընկերութիւնը,
եւ կեանքի ապահովագրութեան ճիւղին ժրա-
շտն Տնօրէնը՝ Միհրան Էֆ. Տէր-Ներսիսեան
որոնք ամէն պիւրութիւն ընծայեցին այս
հանրօգուտ գործին կատարմանը համար:

ՕՏԱՐ ԷԶԵՐ

ՃԱՌՈՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ս Է Ր (°)

Կրնամ մոռնալ եեզ,
Անայնի դասերուն մեջ անող
Յորենի հասկերուն
Փայլակին ցոլեկն լուսավառուելուն
Չափ կարն ժամանակի մը համար նոյնիսկ:

Քնացայ, բու վրադ մեծանելով.
Թրեւս այդ պատճառով,
Երազիս մե՛ջ ճեսայ եեզ.
Երբ միայն գիտնայի քե երազ եր ճեսաւս,
Չ'պիտի արքնայի:

Պէտք է երազ կոչենք միմեկ,
Ինչ որ կը ճեսենք,
Մեր պառկած առեմ:
Չեմ կրնար իրականութիւն համարիլ ես,
Ունայն այս աշխարհը իսկ:

Գիտեմ որ կեանքս
Չունի երբեք վաղորդայնի մը հաւաստիք,
Բայց այսօր,
Երբ դեռ միութիւնը չէ ինկած,
Ես կը վազազնիւ անցնող օրուան վրայ:

Ո՛վ դուն
Ի՞նչ ես Բամի

Հիմ մայրաքաղաքին կիւրն
Բու ձայնդ է միայն,
Որ կը մնայ անցեալին:

— > < —

ԳԱՐՈՒՆԻ ԵՐԳ

Օհ, սիրելուն ցաւը,
Թախուն ամենեմ,
Կուսագեղ շուշանի մը պէս,
Որ ամառնային դաշտագետիկին
Թանձրախիս դալարիքներուն մեջ կը փրքի:
Երկինքը ծով մըն է
Ուր ամպերուն կոհակները կ'ելլեն,
Եւ լուսինը կուր մը,
Որ դէպի լուսաւորներուն պուրակները,
Թեւեակելով կ'ընթացայ:

Օհ հեռուի կոհակները, —
Իզէ ծովուն, —
Ծաղիկներ բլրային,
Ու քաղելով ես զանոնք, կարեմայի,
Սիրոյս բնծայաբերութիւն մը բնել:

Ֆրանսերէնէ Թարգմ. ՍԴԷԼԼԱ

Ա.ԲԻ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԳՈՐԾԱԿԱՆ (Մարգուտ) — Ձեր յանձնարարած նոր բա-
ժանորդին՝ Ս. Ք. ի՝ Մասիսները զրկուեցան այսօր: Կը
ուպատենք մեր մայիս 22 ամսաթիւ նամակի պատաս-
խանքին:

Տ. Փ. (Սերասիա) — Մասիսները այսօրուէն կը սկսինք
զրկել ձեր նոր հասցէին: Բաժանորդագիրը...

Յ. Ա. Գ. (Մաշարիա) — Դանձեցինք ձեր զրկած գումարը
ի հաշիւ Մասիսի բաժանորդագրութեան: Հաճեցէք
պակաւը ամբողջացնել: Հասցէի փոփոխութիւնը կա-
տարուեցաւ:

Դ. Մ. (Ճարդիկ) — Ձեր բաժանորդագիրը կրնաք ուղղակի
խմբագրութեանս զրկել նամակադրոյժով:

Հ. Ք. (Սամսոն) — Դրկեցինք Մասիսի 13-14-15 թիւերը,
չեղեալն ամբողջացմանը համար: Տեղւոյդ մեր գոր-
ծակալը կը հասցնէ մեզ ձեր բաժանորդագիրը զոր
իրեն վճարած ըլլալնիդ կը յայտնէք եւ կը յանձնէ ձեզ
ընկալագիրը:

ԳՈՐԾԱԿԱՆ (Սերասիա) — Դանձեցինք ձեր մանուա-բոսթը
ի հաշիւ Մասիսի բաժանորդագրութեանց:

ԷՍԿԻ-ՇԷՀԻՐԻ մեր բաժանորդներուն կը փութանք ծա-
նուցանել թէ Հրամայ Էֆ. Չալքեան ստանձնած է Մա-
սիսի գործակալութիւնը այդ քաղաքին մէջ ու շրջակայնե-
րուն համար: Հետեւաբար, նոր բաժանորդագրութեան
յանձնարարութիւնները կարելի է ընել Չալքեան Էֆ. ին
եւ անոր:

(*) Մերոյ անձնաւորութիւնը, ճարտնական բանա-
տեղութեան մէջ, Կ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

ՎՃԱՐՕՐԸ

Վ. Է. Կ. ԲՕԼ. ՊՈՒՐԺԷԻ

Թիւ 3

— Ինծի հանդէպ բռնած ընթացքին, յարեց, անոր համար կը չարչարէ զիս, որովհետեւ կը սիրեմ զիրենք ու զիսեմ թէ որքան կը սիրեն զիս : Կը յիշե՞ս թէ խորշումի (phobie) մը հաւատացած եմ : Այս բառը նոյն իսկ զուարճացուցած էր քեզի : Մտածեցի որ մայրս, որուն թունա ջերմութեան թիւնը կը ճանչնամ, իղճի յաճախանքէ մը կը տառապէր : Կարճ խօսքով, քեզ չտեսնելէս ի վեր, որ ամիս մը կայ, զգուշացայ անոնց հետ վիճարանելէ այս խնդրոյն վրայ որ այնքան պարզ բլլալու էր, չէ՞ : Հաստատուեցայ Պոնաբարդ փողոցի նոր բնակարանս, պահելով սենեակը, զոր իրենց համար պատրաստած էի : Եւ, ահա մայ սիրայ զանոնք զիտելու : Այս բառը կրնայ զարմանալի թուիլ քեզ, քանի որ երբեք բաժնուած չեմ անոնցմէ : Այս այսպէս է սակայն : Բացի այն ատենէն ուր մօրս համար լերդախախտ մը սկզբնաւորութեան երկիւղը ունէի, անոնց վրայ երբեք գործադրած չէի այն սուր զննութիւնը որ արհեստին բերամբը կը զարդանայ մեր մէջ : Այնպէս մը եղաւ որ իբր թէ իմ մէջս զաւակը կ'անհետանար յանկարծ տեղի տալու համար բժիշկին . . . : Շատ դժուար է ինծի բացատրել քեզ վրձակ մը որ անշուշտ իր նմանը չունի : Սակայն պիտի հասկնանք քեզ . . . Եթէ արհեստական կարողութիւնը մերթ ընդ մերթ քնանալու պէս չըլլար մեր մէջ, ոչ մէկ բժիշկ երբեք սիրահար պիտի ըլլար, եւ, միւս կողմէ, եթէ անդամ մը որ բոլոր կարողութիւնը արթննալով չի համակէր ամբողջ մարդը, ոչ մէկ սիրուն յաճախորդուհի ապահովութեան մէջ պիտի գտնուէր բժիշկին մը մօտ : Չեմ զիտեր ուրիշ օրինակ մը որ լաւագոյն կերպով ցուցնէ թէ մեր մասնագիտա-

կան զատարարականութիւնը ինչ երկուստեան մը առակ կ'ընծայէ զիս : Այդ, վերլուծման այս տաղանդին մէջ հաստատուելի թէ հայրս եւ մայրս իմ միջեւ այն ատեն նշմարածէս աւելի տկարացած էին, եւ ամէն մէկը իր խառնուածքին չափովը : Հայրս «Պրաքթիկալ» ունենալու վրայ է, մայրս լեալի հիւանդութիւն : Բայց անցնինք, կը խնայեմ քեզէ մանրամասնութիւնը քննութեան մը որուն քեզէ խնդրելիքն վերաբերեալ միակ շահեկանութիւնը արդիւնքին մէջն է : Եւ երբեք կարողութեան հաստատուելի թէ իրենց էութեան մէջ թաքուած մտածանջութեան տարր մը կար, որուն վրայ երբեք չէի կասկածած . . . :

— Մտածանջութիւն մը որուն առաջին դուն չըլլած, ընդհատուցի : Ես ալ դիտած եմ խեղճ ծնողք : Կարելի բան չէ . . . :

— Բայց մտիկ ըրէ՛, աւելցուց անհամբերութեամբ : Ութ օր կայ, հիւանդանոցէն ելելուս՝ այս զազափարնեքը սովորականէն աւելի կը տանջէին զիս : Պէտք է բռնի որ տուջի օր մայրիկը թողած էի վրդովիչ երեւոյթով մը : Հիւանդանոցէն այցելութիւնը կարծածէս աւելի կարճ տեւած էր : Կը հաշուեմ որ գործնական վարձարանը երթալէ առաջ ուր ժամագրութիւն ունէի, կրնայի Ալիս փողոցէն անցնել լուր առնելու համար, չեմ կը հասնիմ : Վեր կ'ելլամ երեք յարկերէն, եւ, վերնագաւթախիւն վրայ, երբոր զանգալը երկու հեղ պիտի զարնէի — քան տարիքի վեր այս կերպով կը ծանուցանեմ ժամանումս — ձայնիկ կը բռնի որ ներսէն կուգան կարծես զբան ետին վիճարանութիւն մը անդի կուենար : Անհասարկ էր բառերը որոշելու բայց ձայնիկէն մէկը կը ճանչնամ, հօրս ձայնը : Միւսը, ոչ, Պահ մը ականջս լարեցի :

որի բան չիմանալով եթէ ոչ խօսքի բեր-
բուններ, ի մէջ այլոց սա բացազանչութիւնը
զոր հայրս արձակեց երկիրս. «Բայց ամօթ
բան է, ամօթ բան է . . .» Եւ Յանկարծ, մաս-
ծելով որ եթէ դուռը բացուէր հօրս կամ մօրս
կողմէ, պիտի լսենուէի մօրիկ ընողի մը գերին
մէջ, սեղմեցի զանդակին կոճակը, Կրկնակ
հարուածի հնչիւնէն որ իմ ներկայութիւնս կը
յայտնէր, ճայները դադրեցան. Հօրս ստնա-
ճայը մօտեցաւ. Կը գտնուէի այն վայրկեան-
ներէն մէկուն մէջ ուր Չղային մեքենան այն-
քան ձգտուած է որ ամենապզտիկ նշաններն
իսկ կ'արձանագրէ. Իր օտքին ներքեւ տալս-
տակամածին ճարճատուփն եւեթ, կը գու-
շալէի թէ հայրս կը գողար. Ատիկա կը գու-
շալէի նաեւ այն եղանակէն որով սողնակը
զարձուց, երեք անգամ փորձելով. Այնքան
խռոված էր որ հաղիւ իմ հարցումին պատաս-
խանելու բառերը դաւաւ. «Մէկուն հնա էր
Անճանդիստ կընեմ քեզ» — «Ամենուն
բաւ, եւ շարունակեց. մայրիկը հոս չէ,
Բայց եթէ ուղեւ վայրկեան մը սպասել,
գործս կը լինցունեմ ու յետոյ քուկդ եմ»
Չէր ուղեր որ ես տեսնամ այն անձը որուն
հետ ունեցած էր այն բուռն տեսակցութիւնը
Բնականապէս այդ անձը կը փափաղէր ան-
չուտ տեսնել զիս, վասնզի այն պահուն
յօրում հայրս ճաշտարահ կը մտցունէր, զիս,
խոհանոցին դուռը ուր հրած էր իր հիւրը,
կենակի վրայ բացուեցաւ. Այդ միեւնոյն
ճայը որուն հօրս հետ վիճիլը լսած էի,
բաւ. «Պարոն Քոռպիէս, չեմ ուղեր ձեզ
տաղակցնել. Նորէն պիտի գամ պզտիկ գոր-
ծին համար». եւ միեւնոյն ատեն տեսայ
մայր մը, թերեւս մեղի տարեկից, անակիօրէն
խաթարուած զէմքի մը վրայ բաւական նորը
դիժերով, սրածայր ուսերով, ազագուն մարմ-
նով մը զոր գարշելի հագուստներ կը ծած-
կէին. Դուն կը ճանչնաս այդ զրգեւակները
արհեստով դրամակարգի, որուն վրայ կը վեր-
ջանան մեր հին սրտէնկողմերը, մեր հին
տաքամները եւ մեր հին զլխարկները՝ ան-
անուանելի ծուկներու վերածուած. Իմ տե-
սածս ալքով ու ծխամորձ կը հոտէր, ու իր
կարմրակուր աչուքներուն մէջ ունէր ապուշ
ու լպիլիլ այն նայուածքը զոր այնքան յա-

ճախ տեսած եմ իր տեսակի մարդոց վրայ.
Հպարտութեան եւ անբանացումի խառնուրդ
մըն է ատիկա, որ նշան է յոյժ մօտալուս
ընդհանուր անգամալուծութեան. Երեսօ ի վեր
նայեցաւ, կրկնելով. «Նորէն պիտի գամ» եւ
դուրս ելաւ գեանին վրայ խրոխտաբար քըս-
կաւելով իր ձեղքաւած կօշիկները.

— Խեղճին մէկն է որուն աղին հայրդ
կ'ողորմի, այսչափ, պատասխանեցի. Ան-
չուտ աւելի խոհեմութիւն պիտի ըլլար ա-
ռանձին չընդունիլ այդ տեսակ մարդերը, չի-
տակ է. Բայց այս Բարիզցի մուրացկանները
արհեստակցութիւն կազմակերպած են, Նա-
րօյի մուրացկաններուն պէս. Իրարու տե-
ղեկութիւն կուտան, եւ ապահով եղիր որ
սա ըսածդ զիտէ թէ Պ. Քոռպիէս շատ հա-
րուստ չէ. . . .

— Այո, վրայ բերաւ Էօմէն. տարակոյս
չկայ թէ մուրացկան մըն է. Բայց միմիայն
մուրացկան մը չէ. . . .

— Ընչ ըսել կուզես . . .

— Ըսել կուզեմ թէ, դրան ետեւէն մօրիկ
ըրած ատենս, իր ճային թրթռումին մէջ,
իր առնել քաշելու ձեւին մէջ, սպառնալիքի
պէս բան մը տեսայ իր «նորէն պիտի գամ»ի
չնշտին մէջ, գրեթէ հեղինակութիւն մը. . . .
Եւ եթէ հասարակ մուրացկան մը ըլլար,
հայրս իմ վրայ հանդուստ այդ ատիճան պի-
տի խռովէ՞ր, խոյս պիտի տա՞ր իմ հարցում-
ներէս երբ առանձին մնայինք, պիտի խնդ-
րէ՞ր ինչ որ այս հանդիպումին վրայ չիօսէի
մօրս. . . .

— Բայց այո՛, բայց այո՛, պատասխանեցի.
Ամէն բան կը բացատրուի եթէ իրօք ենթա-
դրես թէ ատիկա գէշ աղքատ մըն է որուն
մայրդ՝ աւելի իմաստուն կը մերժէ ողորմիլ
եւ որ կը փորձէ ձեր առնէն ներս սպրդիլ
առանց իր գիտութեանը, բուռ մը սու կոր-
զելու համար Պ. Քոռպիէսի զթաքաթութենէն.

— Դուն հայրս ու այդ մարդը գէ՛մ զիմաց
չտեսար, աւելցուց Էօմէն. Ես որ տեսայ
զիրենք, գաղանիքը զգացի այնքան յստակօ-
րէն որքան կը զգամ սա կրակը. . . . Եւ իր
ձեռքը երկնցուց զէպիլ բոցը որ կը շղար
վառարանին մէջ, կակուղ ու չիկափայլ.
«Այնքան զգացի որ, շարունակեց, այդ

ապաւորութեան ազդեցութեանը տակ, անհաւատալի գործի մը միտեցայ, Հօրս տունը հասած ատենս ճամբած էի կառքը, քիչ մը մարմնամարդ ընկուեալս ապառազով մինչեւ դըպրոց քալելու համար: Երբ դուրս ելայ Ամիօ փողոցէն, դիպուածը սեղեց որ Վիէյլ-Էսթրա-բատ փողոցը բռնեմ, յետոյ Սէն-Ժաք փողոցէն շեղելու համար: Ձեռք դիտեալ կը յիշե՞ս որ Սուֆլօ փողոցը չհասած՝ հոն ձախ ձեռքիդ վրայ տեսալ մը կապելայ կը դանուի, աւելի ճիշդը գինեատուն մը, բաւական տարօրինակ երեւոյթով, տակառներու եւ անտաշ փայտէ սեղաններու զարդարանքով մը. . . Ոչ գինիի վաճառատուն է ոչ սրճարան: Հոն յաճախող հասարակութիւնն ալ ոչ սրճարաններու ոչ գինիի վաճառատուններու հասարակութիւնն է: Բանի մը գործաւորներ կերթան հոն շատ քիչ անգամ, բայց մանաւանդ քաղքենիներ որոնք դասագրուի ըլլալու վրայ են, վերակացուներ առանց քօլէժի, նկարիչներ առանց գործատան, խմբագիրներ առանց լրագրի, բանաստեղծներ առանց հրատարակչի, ապաղայ փաստաբաններ առանց դատի, բժիշկացուներ առանց արձանագրութեան: Տեղւոյն սիրական ըմպելիքն է ապսէնթը: Երբ առջեւէն անցնիմ, անպատճառ աչք մը կը նետեմ ներսը, գրեթէ ակամայ: Երբեմն հիւանդանոցի հին ընկերներ գուրս հանած եմ անկէ: Այդ առտուն ալ ներս նայեցայ, եւ ճանչցայ խորի սեղաններէն մէկուն կրթնած, կանանչորակ ու կաթնադոյն անսելի ըմպելիէն գաւաթ մը առջին, այն առեղծուածային անձը որուն հանդիպած էի հօրս տունը: Երբ հոն կը կենայի, հետաքրքրութենէն անշարժացած, անիկա գլուխը վեր առնելով իմ կողմն նայեցաւ: Ետ ընկրկեցայ՝ յանցանքը գործելու պահուն բռնուած յանցաւորի մը մը պէս, ու պահուրեցայ մօտակայ կրպակի մը գոնաքիւրն ետեւը: Պարապ յոգնութիւն: Արդէն կատարելապէս գինով էր ու անկարող դէմքս մտաբերելու: Սակայն իր դէմքը այս անգամ աւելի քսամուկիօրէն ուշս գրաւեց քան քիչ մը առաջ, այն հակապատկերին պատճառով՝ որ կար ընդմէջ ալքովամոլի դիմաւորելու ապշութեան եւ դիմադերու նրբութեան, որուն մասին խօսեցայ քեզ:

Ալքովամոլի երկու որոշ տիպար կայ. անհանկանդ, եւ — եթէ կարելի է առանկ րաւ մը գործածել այսօրինակ դձնութեան մը համար — նրազգացը: Կայ գինով մը սր կրպակէն կը խմէ եւ կայ որ կը զինովեայ ուղեղէն, խաթարուած ջղադարութեանը պատճառով, մոռնալու համար, խիստ շատ անգամ ինքզինքը մոռնալու համար: Այս գինովութիւնը մոռնաւորապէս յատուկ է ապսէնթ խմողին: Միւսէի մը, Վէնզէնի մը զինովութիւնն է սոն: Իմ անձանցութիւնս ալ աս էրէն արտաքին է: Արդարեւ չեմ ուզեր քեզ լացատրել եղական մեղամաղձութիւնը որով դրոշմուած էր այդ գլուխը, Հիմակ հոն կը կարդայի այլեւս ոչ թէ լարչութիւն, հպարտութիւն, հապա անստամոն ու անյարմար նկի անձկութիւն մը, յաւէտ կորսուած ճակատագրի մը անձկութիւնը: Վայրկեան մը վեր առաւ գաւաթը եւ իր մտածումին ջղաձորէն խնդաց, բերնով մը որուն ապսէնթականները չկային: Դաւկատիպ ու աւելած դէմքին վրայ այդ սեւ ծակը, կաղնչանի կաթի պէս պղտոր դոյնով այդ թոյնին առջեւ այդ քարայրին մէջ որուն խոնաւ կծու հոտը — վարնոց օղիի սիրտխառնուք բոյր մը — մինչեւ ինծի կը հասնէր, կ'երշնամ որ սուկալի աւետարան մըն էր գրեթէ: Գինով մէկ ու միով կլլեց այդ գաւաթը: Չորրորդը կամ հինգերորդը ըլլալու էր, վառնդի վճարելու համար սեղանին վրայ դրաւ արծաթ դրամ մը որմէ մանրուք ետ չարուեցաւ իրեն: Արդ այդ կապելային մէջ ըմպելիքները կ'արժեն երեք չորս սու: Յետոյ բոլորովին ձկնային քնաշարժ, գանդաղկոտ քնաշարժիկի այն ընթացքովը, որուն մէջ կը գուշակուի ողորմածին քայքայումը, նպատակին սեւեռութիւնը չարժանի ճօճումին մէջ, ոտքի կ'ելլայ, կը մնին զինեառուէն մայթը բռնելով, Իրեն կը հետեւի մայթին վրայէն, կ'երթայ, կ'երթայ կ'անցնինք Ֆէյօյանթիւն փողոցէն, վալ-ալ-կրասէն, Բօլ-Ռուայալ ծառուղիէն, Վեր-ալ-պէս, կանդ կ'առնէ Ֆօպուս-Սէն-Ժաք փողոցը, ներքին բակով այն տուններէն մէկունը որանը առջեւ, որոնք թշուառներու ճշմարտ միջնաքաղաքներ են. . . Իրեն կը սպասեմ. . . Ալ չերեւնար. . .

— Եւ այն ատեն , հարցուցի , երբ էօժէն կը վարանէր :

— Այն ատեն , յարեց տկներու տաղանաւոր շատ խղճահար մարդու մը , որուն համար ամէն պարագայի մէջ զգուշի են շեղ հետազոտութեան մը ձեռնարկները , ներս մտայ , դռնապանը նշմարեցի , հարցափորձեցի զինքը , ու իմացայ մարդուն անունը . իրօք հոն կը բնակի , ու Բիէս Ռօպէտ կը կոչուի , կամ ինքզինքը այսպէս կը կոչէ :

— Ուրեմն իսկոյն տեղեկութեանց դրամներով մը երթալու է , յարեցի , այդ անուամբ ու այդ հասցեով պիտի կրնաս տեղեկութիւն առնել :

— Ատիկա մաքէս անցաւ , պատասխանեց Էօժէն , բայց յետոյ ետ կեցայ՝ շատ պարզ պատճառաւանութիւն մը ընելով . հայրս գործի մէջ ելած մարդ է : Ամէնէն աղէկ ինքզինքն զրամաշորթի մը դէմ ձեռք առնուելիք միջոցները , եթէ այդ բանը չէ ըրած , պատճառ մը ունի . . .

— Բայց ի՞նչ պատճառ , պնդեցի :

— Ա՛հ , ըսաւ յարածուն յուզումով մը , ես ի՞նչ գիտնամ . . . Ամէն կարելիութիւններ մտքիս մէջ դարձնելով դարձնելով յանդեցայ սա ենթադրութեան թէ այդ մանչը անհարազատ դաւանէ էր այդ խեղճ հօր , որ ամուսնութենէն առաջ ունեցած էր զայն եւ կը ծածկէր իր մօրմէն . . . Թէ այս վերջինը , զգալուն ինչպէս որ է , կը կասկածի ճշմարտութիւնը , առանց զայն գիտնալու ճշդիւ , եւ ստիկա կը ըսցատարէ այնքան բաներ . . . Այս ենթադրութիւնը մտքիս մէջ ծագելուն պէ՛ս ստուգութիւն մը ստացաւ : Քեզի կըսեմ այս բանը , ապացուցանելու համար թէ հիւանդապին Վիճակի մը մէջ կը գտնուիմ այն աստիճանական հետեւանքով , ուր կը տեսնեմ ծնողքս . . . Այլեւս չեմ կրնար որոշիկ հնարաւոր իրականէն : Այն վարկեանէն սկսեալ շարունակ անցայ դարձայ Ֆօպուս-Մէն-Փաք փողոցին այդ տանը առջեւէն : Իրեն կը քաշէր զիս ու կը վախցնէր միանգամայն : Այն գաղափարը թէ այդ գարշելի աղաւթեալը , որուն անասոյգ քայլին հետեւած էի այդ բազմամարդ թաղին մայթին վրայ , կրնար իմ եղբայրս ըլլալ , ինծի կո-

տար այն անբացատրելի սարսուռներէն մէկը որ մեզ կը դնեն մեր էութեան մինչեւ արմատը . . . Չանց կ'առնեմ պատմել յիմարութիւններս — որովհետեւ զիտեմ որ յիմարութիւններ էին — բայց հօրս ընթացքը ինծի հետ՝ կ'աւելցունէր մատառական չփոթութիւնս : Քեզի պատմած տեսարանէս ի վեր առանձին չենք տեսած զիրար : Երես տուած էր հարցումներէս , ըսած էի քեզ , որպէս զի այդ մասին մօրս չխօսիմ : Լուսթեան այդ պաշտամանքը՝ ամէն մէկ այցիս կը գտնէի իր աչուքներուն մէջ . բան մը որ աւելի կը մխրճէր զիս երեւակայութիւններու մէջ , մինչեւ որ նորէն անցնելով Ֆօպուս-Մէն-Փաք փողոցին այն տանը առջեւէն , զոր երէկ ցորեկ նկարագրեցի քեզի , մօրս հոն մտնալը տեսայ . . .

— Ու առիկից ի՞նչ կը հետեւցնես , հարցուցի , տկամայ կրեւով թեւադրութիւնը այն տեսնողս քննութեանը որուն կը ձեռնարկէր իմ առջեւ :

— Ոչինչ , պատասխանեց . թէ իմ ենթադրութիւնս սխալ է : Բանի որ մայրս ալ կը ճանչնայ այդ անձը , անիկա իմ ենթադրածս չէ . . . Պատճառաւանութիւն մըն է ստիկա որ կրնայ ճշմարտակերպ թուիլ : Ինծի համար տկներու է թէ՛ այդպէս պաշտաւելով ինծի որ տան մէջ Ռօպէտի հետ հանդիպմանս մասին չխօսիմ , հայրս չուզեց բան մը ծածկել մօրմէս աչք մարդուն նկատմամբ , այլ ուզեց անիկից բան մը ծածկել ինծի նկատմամբ . . . Ինչո՞ւ . . . Այո՛ , ինչո՞ւ . . .

Կը ըսէր , ու ես խօսք մը իսկ չէի գտներ կարեկցելու համար տարօրինակ անձկութեանը որուն մասնուած կը տեսնէի զինքը : Ստիկաւորած էի ընդունիլ թէ ինծի յայտնած իրողութիւններուն ամբողջութեանը մէջ խորհրդաւոր ըլլալու աստիճան տարօրինակ բան մը կար : Բայց Էօժէնի այդ ճառին եղբայրացութիւնը յարաբերութիւն մը կ'ենթադրէր՝ մէկ կողմէ ընդմէջ այդ իրողութիւններուն , եւ միւս կողմէ այն մերժման զոր ծնողքը ցոյց տուած էին իրեն հետ բնակելու իր խնդիրքին : Արդ , ինչպէս կարելի էր ընդունիլ այս յարաբերութիւնը , Ո՛րչափ եւս առաւել ընդգծել թէ այն ամբողջական խանգարումները ,

որոնց ենթարկուած կը կարծէր իր հայրն ու մայրը, ու եւ է յարաբերութիւն մը ունենալին այդ Բիւէն Ռուպէսին գոյութեանը հետ, միտքն թէ այդ հաւանական գրամաշորթը, այդ մուրացիկն ու այդ ստոյգ գինովը՝ ոչ թէ հօրը, այլ մօրը անհարազատ որդին չըլլար։ Այս ենթագործութիւնն էր որ յանկարծ ծագեցաւ — բժիշկին բառովը — մտքիս մէջ, եւ սա կնճռաբերութիւնը դուշակեցի. մանկամարդ աղջիկ մը մէկէն կը հրապուրուի, զաւակ մը կուեննայ. նորէն կ'ամուսնանայ ատենց իր յանցանքը խոստովանելու։ Տղան կը մեծնայ հետու մօրմէն, որ կը նորոգէ իր կեանքը։ Ան ուրիշ զաւակ մը ունի, հարազատը։ Օր մը, առաջին զաւակը երեւան կ'ելլէ։ Գտած է մօրը հետքը։ Կը սպասնայ, Դմբախտ կ'ընը ամէն բան կը խոստովանի էրկանը, որ կը ներէ իրեն։ Բայց հարազատ որդին պիտի ներէ՞ր։ Այդ սիրելի համարումը կորսնցուցնելու դադափարին առջեւ մայրը սոսկումէն կ'ողկւարի, եւ ամուսինը հոգիի մեծութիւնը առաջ կը տանի՝ այդ սոսկումը հասկնալու եւ անոր մասնակցելու աստիճան։ Ատենք էին զիս համակող մտածումները, մինչ բարեկամս միշտ անխօս, սենեկին մէջ վեր վար կը քալէր։ Այդ պահուն իր մտածումներն ալ տանք չէին։ Չէի համարձակեր ոչ խօսիլ, ոչ ալ գրեթէ երեսը նայիլ, վախճալով որ եզրակացութեանց այդ գուգորդութիւնը մէկէն իմ մէկ մեր աչքին կը զարնէ։ Իրեն շատ դու պիտի պատճառէր այդ ճշմարտութիւնը։ Կրնայի՞ նախատեսել որ բուն ճշմարտութիւնը ա'լ աւելի ցաւառիթ պիտի ըլլար։

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կայսերական գնահատում. — Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Դ. կարգի Օսմանիէ պատուաւ նշան շնորհել Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեակի Ա. խորհրդական Սենեքերիմ էֆ Մանուկեանի որ զլիաւոր օժանդակներէն մէկն է այդ հանրօգուտ հաստատութեան։ Նոյն պէս, Դ. կարգի Մէճրիպէ պատուանշան՝ Առեւտրական Սենեակի Ա. քարտուղար եւ նոյն Սենեակի Լրագրին Տնօրէն-Սմարտիր Զարեհ էֆ. Եռասեփեանի, որ միանգամայն արտօնատէրն է Արեւելք օրաթերթին։ Այս կրկնակ հանգամանքներով, Զարեհ էֆ. Եռ-

սեփեան զրջի վաստակաւոր մըն է որոնք Քրանսերէն յօդուածները, մասնաւորապէս Առեւտր. Լրագրին մէջ, գնահատուած միշտ։ Ջերմասէս կը խնդակցիք մեր լոյս գիւրի պաշտօնակցին՝ Կայսերական բարձր դաս հատման արժանացած ըլլալուն համար։ Հաճելի պարտք մը կը սեպենք նաեւ շնորհ լարել Յովսէփ էֆ. Եռասեփեանը, Շիրքի խայրէյէի ընդհ. համարակալը, որ բարձր ցած է Սանիյէի աստիճանին։ Այս կարգու պաշտօնէն զատ, Յովսէփ էֆ. Եռասեփեան կը վարէ նաեւ, ինչպէս յայտնի է, Մաթի մաթիքայի ուսուցչութեան պաշտօնը։ Սա չափաւորարանին մէջ, եւ հայ մամուլին ալ ծանօթ է Արեւելքի ու Մասիսի մէջ իր երբեմնի հրատարակած զիտական համարիչ սրամիտ յօդուածներովը որոնց պակասը միշտ զգալի է՝ յորմէ հետէ իր զբաղումները ներքե իրեն գրել այլեւս։

ԼՈՒՍԱՅԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՐԱՐԿԻՐ, 14 Մայիս 1900

Թիւ 18 Մասիսի Յուշատարին մէջ «Նշանախօսութեան մը շուրջը» խնդրոյն առ թիւ մէջ կը լսուիք Կրօն. Ժողովի մի որոշումը եւ կը զրէիք թէ «Այս կերպով Պատրիարքարանը սկզբունք մը հաստատուած կամ նուիրագործած կըլլայ» եւ այլն։ Ներքե ցէք որ ըսեմ թէ այդ սկզբունքը ոչ նոր է եւ ոչ ալ Պատրիարքարանի կողմէն հաստատուած։ Գաւառներու մէջ նշանախօսութեան համար երկուստեք կը արուին նուէրներ։ Անոնք իսկ նշանախօսութեան վայրկեանին աղուն եւ աղջկան ծնողքները զիտան որ եթէ նշանախօսութիւն մը մերժուի ըստ աղուն կողմէ, այն ատեն մերժող կողմը ընտել իրաւունք չունենար իր տուած նուէրները եւս պահանջելու։ Միւսեւոյն է նաեւ աղջկան կողմին համար։ Եւ այսօրինակ պարագաներ սովորական գործած իրողութիւններ կրնան սեպուիլ, որոնք ոչ մէկ բողոքի նիւթ տուած են։

Գաւառական կեանքի վաղեմի այս սովորութիւնը, որ ա'լ ընտանեկան բարեկրօն մի օրէնքի կարգ ահցած է, ուրախալի է տեսնել որ կը յարգուի Կրօն. Ժողովին ալ կողմէն։

Մ. Վ.

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆԱՅԱՆԻ

Կ. Պոլիս, Ֆինանսերու եօղաշու, Թիւ 27

“AU TALON D'OR,,

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու կամար պատրաստուած

կաշարս, վոյվոսս փողոց, ք/ս 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը :

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ — ԱՆԳԼԻԵՐԷՆ

Աշխատասիրեց Մ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Սոյն Բառարանը կարեւոր պէտք մը կը լեցնէ՝ անգլիերէն սորվիլ ուզող հայ ուսանողներուն համար մասնաւորապէս, եւ անգլիերէն լեզուով զրազող ամէն հայերու համար ընդհանրապէս : Լաթակաղմ գեղեցիկ հատար մըն է : Մատթէոսեան տպարանէն հրատարակուած : Գին 30 դրուշ :



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի

միանգամայն մեկնանք

կը գտնուին :

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն խափանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց .

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց

ՊԱԼԻՍ } 1. Սուլթան Համալ.
2. Սուլթան Գէյադիւր .

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Կատարեալ երաւեստութիւն

Մասնահիւրեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՀԱՐԱՐԱՆԱՅ ԿԱՐԵԱՆԻ ՄԱՐԿԱՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՏՊԱՐԱՆԸ

Յարատել գարգացմամբ հասած է Տպարաններու
առաջին կարգին.

ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

Անմրցելի ըլլալու կէս դարու համրաւը կը վայելէ

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Ճոխ մթերք մը ունի լաւագոյն տեսակէ

Թուղթերու, Պահարաններու, Տուարներու

եւ Գրասենեկի սակեկ տեսակ պիտոյից.

Հետեւաբար աւելորդ է ըսել թէ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄԻՆ

ԹՂԹԵՂԻՆԱՅՎերաբերեալ ամէն կարգի յանձնարարութեանց

Համար գիմուելիք լաւագոյն Հաստատութիւնն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ